ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 4/Ա- 5

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)

ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-5, Գեղարքունիք-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման քաղաքաշինական նախագծման առաջադրանքների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ և 14-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքները (Վարդենիս քաղաք, Այրք, Ներքին Շորժա,Վերին Շորժա բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքին:
2. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքները (Գեղամասար խոշորացված համայնք՝ Սոթք, Ազատ, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասար, Դարանակ, Կախակն, Կութ, Կուտական (Զառիվեր), Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքին:
3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «24» «հունվարի» 2022 թ.